ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ՈՐԴԻՆ
SPECIAL TOPIC: THE SON OF GOD

Սա ՆԿ-ում Հիսուսին տրված ամենակարևոր անուններից է: Անշուշտ այն ունի աստվածաբանական նշանակություն: Այն Հիսուսին ներկայացնում է որպես «Որդին» կամ «Իմ Որդին», իսկ Աստծուն դիմում է որպես «Հայր» (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏԾՈ ՀԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ): ՆԿ-ում այն հանդիպում է ավելի քան 124 անգամ: Նույնիսկ, երբ Հիսուսն է Ինքն իրեն անվանում «Մարդու Որդի» Դանիել 7:13-14 հատվածից, սա ևս ունի աստվածաբանական նշանակություն:

ՀԿ-յան հասկացությամբ «որդի» բառը կարող է վերաբերել չորս հատուկ խմբերի (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. . . ՈՐԴԻՆԵՐԸ (ՀԿ))՝

1. հրեշտակներին (սովորաբար ՀՈԳՆԱԿԻ թվով, տես՝. Ծննդ.6:2, Հոբ 1:6, 2:1)
2. Իսրայելի Թագավորը (տես՝ 2 Թագ.7:14, Սաղմ.2:7, 89:26-27)
3. Իսրայելի հավաքական ազգին (տես՝ Ելից 4:22-23, 2 Օր.14:1, Ովս.11:1, Մաղ.2:10)
4. Իսրայելի դատավորներին (տես՝ Սաղմ.82:6)

Երկրորդ կիրառությունն է, որ կապ ունի Հիսուսի հետ: Այս կերպով «Դավթի որդի» և «Աստծո որդի» երկու արտահայտություններն էլ կապված են 2 Թագավորաց 7, Սաղմոս 2 և 89-ի հետ:

ՀԿ-ում «Աստծո որդին» երբեք չի օգտագործվել հատուկ Մեսիայի համար, բացառությամբ որպես էսկատոլոգիական՝ գալիք թագավորի համար, որպես Իսրայելի «օծված պաշտոններից» մեկը: Այնուամենայնիվ Մեռյալ Ծովի Գալարներում այս տիտղոսը Մեսիական նշանակությամբ շատ տարածված է (տե՛ս հատուկ մեջբերումներ *Հիսուսի և Ավետարանների վերաբերյալ Բառարանում /Dictionary of Jesus and the Gospels/*, էջ՝ 770): Նաև «Աստծո Որդի» տիտղոսը հանդիսանում է Մեսիական տիտղոս երկու հրեական միջասատվածաշնչային հայտնության աշխատություններում (տես՝ 2 Եզրաս 7:28, 13:32,37,52, 14:9 և 1 Ենովք 105:2):

Այս խոսքի ՆԿ-յան հիմքը, որը վերաբերում է Հիսուսին, լավագույնս ամփոփվում է մի քանի կատեգորիաներով՝

1. Նրա մշտագոյության՝ նախքան արարումը գոյություն ունենալը (տես՝ Հովհ.1:1-18)
2. Նրա բացառիկ (կուսական) ծնունդը (տես՝ Մատթ.1:23, Ղուկ.1:31-35)
3. Նրա մկրտությունը (տես՝ Մատթ.3:17, Մարկ.1:11, Ղուկ.3:22: Աստծո ձայնը երկնքից միանում է Սաղմոս 2-ի թագավորին Եսայի 53-ի չարչարվող ծառայի հետ միասին):
4. Սատանայի կողմից Նրա փորձությունը (տես՝ Մատթ.4:1-11, Մարկ.1:12,13, Ղուկ.4:1-13: Նա փորձվում է, որպեսզի կասկածի տակ առնի Իր որդի լինելու փաստը, որ զուցե այդպիսով իր նպատակը կիրականացներ մեկ այլ ճանապարհով՝ առանց խաչի):
5. Անընդունելի խոստովանողների կողմից Նրա մասին հաստատություններ՝
   ա. դևերը (տես՝ Մարկ.1:23-25, Ղուկ.4:31-37,41, Մարկ.3:11-12, 5:7, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԴԻՎԱԿԱՆԸ [պիղծ ոգիները] ՆԿ-ում)
   բ. անհավատները (տես՝ Մատթ.27:43, Մարկ.14:61, Հովհ.19:7)
6. Իր աշակերտների կողմից հաստատությունն Իր մասին.
   ա. Մատթ.14:33, 16:16
   բ. Հովհ.1:34,49, 6:69, 11:27
7. Իր կողմից հաստատությունը.
   ա. Մատթ.11:25-27
   բ. Հովհ.10:36
8. Աստծո մասին Իր կողմից որպես Հոր՝ ընտանեկան փոխաբերության կիրառությունը.
   ա. Աստծո համար «Աբբա» բառի կիրառությունը Իր կողմից
      1) Մարկ.14:36
      2) Հռոմ.8:15
      3) Գաղ.4:6
   բ. Պարբերաբար Իր կողմից օգտագործվող Հայր (*patēr*) բառը՝ նկարագրելու աստվածության հետ Իր փոխհարաբերությունը:

Որպես ամփոփում, «Աստծո Որդի» տիտղոսը աստվածաբանական մեծ նշանակություն էր ներկայացնում իրենից այն մարդկանց համար, ովքեր ՀԿ-ը և դրա խոստումներն ու կատեգորիաները լավ գիտեին, սակայն ՆԿ-ի գրողները անհանգստանում էին տեսնելով այս տիտղոսի կիրառությունը հեթանոսների մեջ, քանի որ համաձայն նրանց հեթանոսական հավատամքի հիմքի «աստվածները» ամուսնանում էին կանանց հետ, որոնցից սերվում էին ժառանգներ՝ «հսկաներ» կամ «տիտաններ»: